Ա ԶԱՏԱՄԱՐՏ

ՀՅԴ Պաշտօնաթերթ

Երևան 2010 ՄՈՒՇԵՂ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ







# ԴՐՕՇԱԿ





Օգոստոս N02 (1623)

2010

# ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՎՃՌՈՐՈՇ ԴԵՐԸ ՀԱՅ ԱԶԱՏԱՄԱՐՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՈՒ ՀԱՅՈՑ ԱՆԿԱԽ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Ար. Ս. Եղիազարյան
Պատմական գիտությունների թեկնածու

*Մեզանում հաճախ են անդրադառնում Հայ Յեղափոխական Դաշնակցության ստեղծման և գործունեության պատմությանը: Երբեմն այդ անդրադարձն ունենում է չեղած ու չինծու փաստեր տեղել-հանելու, երբեմն էլ՝ պատմական խեղված իրականությունը վերականգնելու նպատակ: Սույն ակնարկը նպատակ ունի պատմաբանի անաչառ հայացքով դիտարկելու ՀՅԴ առաջին 28 տարիների պատմությունը՝ սկսած հիմնադրումից (1890 թ.) մինչև Հայաստանի Հանրապետության ստեղծումը (1918 թ.):*

*Հայ քաղաքական կուսակցությունների ստեղծումը 19-րդ դարի վերջին Հայոց պատմության մեջ ունեցավ դարակազմիկ նշանակություն: Հայտնի է, որ Հայոց պետականությունը բուն Հայաստանում կործանվել էր դեռևս 11-րդ դարի կեսերին, իսկ Հայաստանի տարբեր մասերում գոյատևած կամ դարերի ընթացքում ծագած ինչ-ինչ պետականատիպ կազմավորումներն ունեցել էին սոսկ տեղային բնույթ:*

*Մինչ հայ քաղաքական կուսակցությունների ստեղծումը անցած 8,5 դարերի ընթացքում թշնամիներին հաջողվել էր վերացնել այն ուժը, որն ի վիճակի էր կազմակերպելու և առաջնորդելու հայությանը: Հայ ժողովուրդը վերածվել էր միատարր մի զանգվածի՝ անգլուխ ու անկազմակերպ:*

*Աբդուլ Համիդի իշխանության ժամանակաշրջանը բնորոշվեց հայ ժողովրդի նկատմամբ ժամանակ առ ժամանակ կիրառվող մասնակի կոտորածներով, որոնց նպատակը հայության մեջ անկախության և սեփական պետականություն ունենալու վերջին բեկորների վերացումն էր: Հայ ժողովրդի արևմտյան հատվածն աստիճանաբար մեռնում էր, մեռնում էր թե՛ հոգեպես և թե՛ ֆիզիկապես: Սակայն ասել, որ Արևմտյան Հայաստանում չկային որոշ գավառներ, որտեղ դեռևս պահպանվում էին հայ հին փառքի հիշողությունները և որոնք ժամանակ առ ժամանակ ծառանում էին բռնության դեմ, սխալ կլիներ: Նման շրջաններ էին Վասպուրականը, Կարինն ու Սասունը: Այդտեղից էլ պետք էր սկսել:*

*Պատահական չէ, որ առաջին հայ քաղաքական կուսակցությունը ստեղծվեց Վանում (Արմենական կուսակցություն, 1885 թ.): 1887 թ. ստեղծվեց երկրորդ հայ քաղաքական կուսակցությունը՝ Հնչակյան կուսակցությունը Ժնևում:*

*Հեղափոխական գաղափարները հայության մեջ Անդրկովկասում և հայության հիմնական կենտրոն Թիֆլիսում 1890 թ. ծնունդ տվեցին Ռուսական կայսրության պատմության մեջ առաջին քաղաքական կուսակցությանը՝ Հայ Յեղափոխական Դաշնակցությանը: Մինչ ՀՅԴ ստեղծումն Արևմտյան Հայաստանում Արմենական և Հնչակյան կուսակցություններն արդեն ծավալել էին որոշ գործունեություն, առաջինը՝ Վանում, երկրորդը՝ Սասունում: Երբ Թիֆլիսի հայ հեղափոխականների երեք ակտիվ ղեկավարների՝ Քրիստափոր Միքայելյանի, Սիմոն Զավարյանի և Ստեփան Զորյանի (Ռոստոմ) ջանքերով սկսեց կազմավորվել հայ հեղափոխականներին միավորող կազմակերպություն, նրանք չէին կարող հաշվի չնստել արդեն գոյություն ունեցող երկու հիշյալ կուսակցությունների հետ: Դրանով էր պայմանավորված ստեղծվող կազմակերպության անվանումը՝ Հայ Յեղափոխականների Դաշնակցություն, ինչպես նաև բոլոր հայ հեղափոխական կազմակերպությունների միավորման նրա ստեղծողների փորձը: 1890 թ. տեղի ունեցած Հայ Յեղափոխականների Դաշնակցություն կազմակերպության հիմնադիր ժողովին հրավիրվել էին նաև Արմենական և Հնչակյան կուսակցությունների ներկայացուցիչները: Առաջին երկու տարիներին կարծես թե միավորման փորձը տալիս էր իր դրական արդյունքները, սակայն 1892թ. համագումարին, որտեղ պետք է լուծվեր միասնական կազմակերպության վերջնական կազմավորման հարցը, արմենականների ու հնչակյանների ներկայացուցիչները չներկայացան:*



*Պարզ էր մի իրողություն. ծնունդ էր առել աննախադեպ հզոր մի հեղափոխական շարժում հայության մեջ, որն ուներ իր անզուգական առաջնորդները, որն իր դրոշի տակ միավորում էր արևելահայ գրեթե բոլոր հեղափոխականներին և, անտարակույս, «կլանելու» էր թե՛ արմենականներին և թե՛ հնչակյաններին: Թերևս հենց այս մտավախությամբ էլ պայմանավորված էր հիշյալ երկու կուսակցությունների փաստացի հրաժարումը մասնակցելու Հայ Յեղափոխականների Դաշնակցությանը:*

*Ինչևէ. Հայ Յեղափոխականների Դաշնակցությունն իր 1892 թ. համագումարում վերանվանվեց Հայ Յեղափոխական Դաշնակցություն: ՀՅԴ-ն իր առաջ խնդիր էր դրել ազատագրել Արևմտյան Հայաստանը և վերականգնել Հայոց պետականությունը: Արևմտյան Հայաստանից ստացվող տեղեկությունները մտահոգիչ էին: Արևմտահայությունը բռնել էր մեռնելու ճանապարհը: Այստեղից էլ ՀՅԴ կարգախոսը՝ «Մահ կամ ազատություն»: Այո՛, մեռնող ժողովրդի վերջնական հարության միակ հնարավորությունը ազատությունն էր: ՀՅԴ ծրագրում նշվում էր, որ յուրաքանչյուր ժողովուրդ կարող է լիովին ինքնադրսևորվել միայն ազատության պայմաններում: Մինչ այդ հարկավոր էր որոշակի գործունեություն ծավալել Արևմտյան Հայաստանում:*

*ՀՅԴ-ն մշտապես իր առաջ դրել է իրականանալի նպատակներ, որով էլ պայմանավորված էր Արևմտյան Հայաստանի ազատագրության հանգրվանային ռազմավարության որդեգրումը: Առաջին հանգրվաններում հարկավոր էր գործիչների միջոցով Արևմտյան Հայաստանի տարբեր վայրերում տարածել քարոզչություն, կազմակերպել ու առաջնորդել տարերայնորեն սկսված ֆիդայական կամ հայդուկային շարժումը, որին օգնության էին նետվելու Արևելյան Հայաստանում և Անդրկովկասում ստեղծվող զինված խմբերը: Պատահական չէ, որ որպես նպատակակետ ընտրվեց Սասունը, որը պատմականորեն ապացուցել էր հայ ոգու պահապանի իր դերը: Այնտեղ արդեն գործունեություն էր իրականացրել Հնչակյան կուսակցությունը: ՀՅԴ առաջին գործիչները Սասունում ծավալեցին արդյունավետ աշխատանք: Կուսակցության շարքերն ընդունվեցին Սասունի առաջին հայդուկ-ֆիդայիները՝ Արաբոն և Աղբյուր Սերոբը, այնուհետև՝ Գևորգ Չաուշն ու Անդրանիկը: Թիֆլիս մեկնելով և ՀՅԴ-ին ծանոթանալով՝ շուտով ՀՅԴ-ին անդամագրվեց նաև հնչակյան Հրայր Դժոխքը: Սասունի հայդուկների շարքերը սկսեցին բազմանալ:*

*Հենց սկզբից ՀՅԴ-ին հարկ եղավ անցնել ծանր փորձությունների միջով: Արևելյան Հայաստանից Արևմտյան Հայաստան խմբերի անցումը խոչըն-*



ԴՐՕՇԱԿ
ՀՅԴ 120

դոտվում էր ցարական սահմանապահների կողմից, իսկ Ս. Կուկունյանի խումբը նույնիսկ սահմանն անցնելիս գնդակահարվեց ռուս զինվորների կողմից: Ս. Կուկունյանն աքսորվեց: Սակայն նման միջադեպերը չկասեցրին ՀՅԴ գործունեության այդ ուղղվածությունը, դեռ ավելին, շուտով այդ շարժումն ավելի ակտիվացավ:

1894-96 թթ. Աբդուլ Համիդ սուլթանի հրամանով Արևմտյան Հայաստանում տեղի ունեցան հայ ժողովրդի մասսայական կոտորածներ: Արևմտյան Հայաստանի տարբեր մասերում արդեն կուսակցական գործիչներ և մարտական խմբեր ունեցող ՀՅԴ-ն մասնակցեց ինքնապաշտպանությանը: Պարզ դարձավ, որ հայության մեջ այլևս գոյություն ունի կազմակերպիչ մի հզոր ուժ: Հենց այդ ուժին էր այդուհետև վիճակված գրեթե միայնակ ղեկավարելու հայ ժողովրդի սկիզբ առած ազատագրական շարժումը: Իսկ որ այդ շարժումը սկսվել էր, փաստ է: Սասունում երկար ժամանակ տեր ու տնօրինություն էր անում և թուրք ու քուրդ պաշտոնյաներին սարսափի մեջ պահում Աղբյուր Սերոբը, որին Սասունի իշխան էին կոչում, իսկ նրա մահից հետո՝ Հրայր Դժոխքը, Գևորգ Չաուշն ու Անդրանիկը: ՀՅԴ-ն Արևմտյան Հայաստանում ամենուրեք զինված խմբեր էր ստեղծում, որոնց զենքով ապահովում էին Անդրկովկասից եկող ՀՅԴ զինատար խմբերը: ՀՅԴ գործիչները պատվով և նվիրումով էին կատարում իրենց պատասխանատու աշխատանքը: Արևմտյան Հայաստանը եռում էր:

Այդ իրավիճակում ՀՅԴ-ն



որոշեց արևմտյան տերությունների ուշադրությունը վերստին Հայկական հարցի վրա բևեռելու, և Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ կատարելու Օսմանյան կառավարության ստանձնած պարտավորության մասին հիշեցնելու նպատակով իրականացնել մի գործողություն՝ Օսմանյան կայսրության մայրաքաղաք Կոստանդնուպոլսում:

Որոշվեց գրավել կայսրության գլխավոր բանկը՝ Բանկ Օտոմանը: Այդ բանկի պայթեցումը կարող էր կաթվածահար անել Օսմանյան կայսրությունը: Բանկը գրավվեց 1896 թ., սակայն ռուսական դիվանագիտության սպառնալիքների ներքո, թե բանկը պայթեցնելու դեպքում իրենք չեն արգելի սուլթանին հայերի կոտորածներ կազմակերպել, ինչպես նաև զինամթերքի քիչ լինելու պատճառով, ՀՅԴ մարտիկները հեռացան բանկից և նավերով տեղափոխվեցին Եվրոպա: Միևնույն ժամանակ ՀՅԴ մարտիկները ռմբահարումներ իրականացրեցին Կոստանդնուպոլսի Սամաթիա թաղամասում՝ թույլ չտալու համար քաղաքի հայության կոտորածը գործողությունից հետո: Ինչը հաջողությամբ պսակվեց:

Շուտով ՀՅԴ-ն իրականացրեց ևս երկու գործողություն Արևմտյան Հայաստանում և Կոստանդնուպոլսում:

Առաջինը 1896 թ. Վանի ինքնապաշտպանության մարտիկներին կոտորած քրդական Մազրիկ ցեղին պատժելու գործողությունն էր, որը կոչվեց Խանասորի արշավանք: Գործողությունը, որին մասնակցում էին ավելի քան 250 հայդուկներ, հաջողությամբ իրականացվեց 1897թ.: Գործողությունը սարսափ տարածեց թուրքերի և քրդերի վրա,



Բանկ Օտոմանի շենքը



ԴՐՕՇԱԿ
Հ Յ Դ 1 2 0

որոնք դարերով սովորել էին անպատիժ թալանել, սպանել ու բռնաբարել հայ ժողովրդին, իսկ այժմ հայտնվել էր մի հզոր ուժ, որին կարծես ոչինչ խանգարել չէր կարող: Հարվածին հարվածով պատասխանելու հայության այս առաջին փորձը բավական արդյունավետ եղավ՝ ստիպելով մյուս քրդական ցեղերին հայության հետ հարաբերություններում զգույշ լինել:

Երկրորդ գործողությունն ուղղված էր Աբդուլ Համիդի և, ընդհանրապես, Բարձր Դռան դեմ: Բարձր Դռան պայթեցման այդ գործողությունը 1898թ., ցավոք, անհաջողության մատնվեց՝ չտալով անհրաժեշտ և սպասվող արդյունքը:

Ամփոփելով ՀՅԴ գործունեության առաջին տասնամյակը՝ ընդգծենք, որ այն հասել էր արմատական շրջադարձի Արևմտյան Հայաստանում և ողջ Օսմանյան կայսրության մեջ, ինչին չէին փորձել և նույնիսկ չէին էլ մտածել հասնել Արմենական և Հնչակյան կուսակցությունները: Շրջադարձն այն էր, որ հայ ժողովուրդն արթնացել էր քնից ու բռնել պայքարի ճանապարհը:

Դարավերջը և մյուս դարասկիզբը հայ իրականության մեջ նշանավորվեց Արմենական և Հնչակյան կուսակցությունների պառակտումով: Ճիշտ է՝ ՀՅԴ-ն արդեն մի քանի տարի էր, որ վերածվել էր համահայկական կազմակերպության և լրացնում էր նրանց բացը, սակայն արմենականների և հնչակյանների պառակտումը հարված էր հայ ազատագրական շարժմանը:

Մինչդեռ հայ ազատագրական շարժումը թևակոխում էր նոր ու վճռական փուլ: Խնդիրն այն է, որ Արևմտյան Հայաստանի ազատագրության խնդրին, որին ՀՅԴ-ն ձգտում էր հասնել սկզբում ինքնավարության նվաճման հանգրվանային լուծումով, գումարվեց նաև արևելահայկական հարցը: Ռուսական կայսրությունը սկսեց ակտիվորեն զբաղվել հայ եկեղեցու հալածանքով: 1903 թ. ցարական օրենքը նախատեսում էր հայկական եկեղեցու գույքի բռնագրավում, որի հետևանքով փակվելու էին Արևելյան Հայաստանում եկեղեցիներին կից գործող ծխական դպրոցները: Հայրիկ կոչվող Մկրտիչ Խրիմյան կաթողիկոսը խուճապի մեջ էր: ՀՅԴ ծրագրում ավելացավ նաև արևելահայկական հարցը: ՀՅԴ-ն ամբողջ թափով օգնության եկավ արևելահայությանն ու Հայ առաքելական եկեղեցուն: Կուսակցության ներկայացուցիչներն առաջարկեցին կաթողիկոսից հրաժարվել հրամանը կատարելուց՝ խոստանալով ընդդեմ ցարական հրամանի և դրա իրագործման կազմակերպել արևելահայության մասսայական ընդվզում: 1903-05 թթ. ՀՅԴ գլխավորությամբ տեղի ունեցան արևելահայության ելույթներ և պատժական միջոցառումներ ցարական պաշտոնյաների նկատմամբ: Ցարական իշխանությունը, ժողովրդին ահաբեկելու նպատակով, բախումներ կազմակերպեց սեփական զորքերի և հայության միջև, սակայն որևէ արդյունքի չհասավ: 1905 թ.՝ տեսնելով, որ հրամանի իրականացումն անհնարին է դառնում, ցարը սեփական օրենքը չեղյալ հայտարարեց: Սա հայության և նրա ղեկավար կազմակերպության՝ ՀՅԴ-ի, մեծ հաղթանակն էր, որ ոգևորություն առաջ բերեց նաև արևելահայության մեջ: Հենց այս դեպքերից հետո էր, որ Մկրտիչ Խրիմյանը կոչ արեց հայորդիներին՝ միանալու «հայ նոր ասպետությանը»՝ Հայ Յեղափոխական Դաշնակցության մարտիկներին:

Անհաջողության մատնվելով մի ասպարեզում՝ ցարական իշխանությունը որոշեց այլ ձևով հարվածել արևելահայությանը՝ հրահրելով թաթարա-հայկական ընդհարումներ ողջ Արևելյան Հայաստանում և Անդրկովկասում: ՀՅԴ-ն Արևմտյան Հայաստանից Արևելյան Հայաստան նետեց իր ուժերի մի մասը, որոնք ՀՅԴ տեղական կազմակերպությունների հետ միասին պատերազմական թատերաբեմի բոլոր կետերում՝ Թիֆլիսում, Նախիջևանում, Զանգեզուրում, Գանձակում, Արցախում, Բաքվում և այլուր ջախջախեցին թաթարներին: Միևնույն ժամանակ ՀՅԴ վրիժառուների ձեռքով վերացվեցին ցարական մի քանի պաշտոնյաներ, որոնք նպաստել էին այն բանին, որ թաթարները հայության որոշ հատվածների կոտորածներ իրականացնեն:

Անդրկովկասում ՀՅԴ անունն այնպես էր թնդում, որ 1906 թ. ստեղծված Կովկասի մուսուլմանների «Դիֆաի» կազմակերպությունն իր առջև խնդիր էր դնում դառնալու այնպիսի ուժ, ինչպիսին հայկական Դաշնակցությունն էր, նույնքան կազմակերպված ու հզոր, որքան հայկական Դաշնակցությունը: Նշվում էր, որ «Դիֆաի»-ն պետք է կարողանա կազմակերպել Կովկասի բոլոր մահմեդականներին, որպեսզի նրանք կարողանան դիմակայել Դաշնակցության կողմից միավորված հայությանը: Ահա՛, այսպես էին թշնամիները տես-

նում հայությունը և ՀՅԴ-ն 1906 թ.: Այդ ժամանակ ՀՅԴ-ն արդեն 160 հզ. անդամ ուներ: Այդպիսի մասսայական և, միևնույն ժամանակ, կազմակերպված ուժ տարածաշրջանում գոյություն չուներ:

Իրադրությունը դժվարին էր Արևմտյան Հայաստանում: 1904 թ. թուրքական հարձակման դեմ ծառացավ Սասունը: Ծանր մարտեր տեղի ունեցան, սակայն Սասունի ինքնապաշտպանությունը պարտություն կրեց, քանի որ նախապատրաստվել ինքնապաշտպանությանը սասունցիները և ՀՅԴ-ն մինչև վերջ չէին հասցրել:

Դրան գումարվեց նաև այն, որ 1905 թ. հայությունն աննկարագրելի մեծ կորուստ ունեցավ: Ռումբի պայթյունից զոհվեց 1890 թ.-ից ի վեր ծավալված հայ ժողովրդի ազատագրական շարժման մեծ առաջնորդը՝ Քրիստափոր Միքայելյանը, որն իր կամքով ու նվիրումով, հերոսականությամբ ու բոցաշունչ խոսքով միավորում էր հայության բոլոր հատվածներին:

Թերևս հենց այդ էր պատճառը, որ բոլորը շունչները պահած



Քրիստափոր Միքայելյան

հետևում էին 1907 թ. տեղի ունեցած ՀՅԴ 4-րդ ընդհանուր ժողովին: Կուսակցության ներսում կարծես թե առաջ էին եկել երկու հակադիր թևեր, և ժամանակակիցները կանխագուշակում էին ՀՅԴ-ի պառակտումը: Չնայած չկար մեծ առաջնորդը, ՀՅԴ պառակտումը տեղի չունեցավ: Ավելին՝ Սիմոն Զավարյանի և Ռոստոմի ջանքերով կուսակցությունն ընդհանուր ժողովից հետո հայ ժողովրդին ներկայացավ էլ ավելի կուռ ու կազմակերպված, էլ ավելի հզոր ու նպատակաուղղված:

Եվրոպայում սկսվում էր երիտթուրքերի շարժումը, որ օգնության համար դիմում էր ՀՅԴ-ին: Օրակարգի էր դրվել երիտթուրքերի և ՀՅԴ համագործակցության հարցը: Փորձենք այդ իրողությունը քննարկել ժամանակաշրջանի իրադրության լույսի ներքո: Աբդուլ Համիդի կամ այսպես կոչված Կարմիր սուլթանի իշխանության ժամանակաշրջանը նշանավորվել էր հայության նկատմամբ Օսմանյան կայսրության հալածանքների սաստկացմամբ և հարյուր հազարավոր հայերի կոտորածով: ՀՅԴ-ն, որ մեծ ջանքեր էր ներդրել Աբդուլ Համիդի տապալման գործում, կազմակերպել նրա մահափորձը 1905 թ., որից Կարմիր սուլթանը հրաշքով էր փրկվել, չէր կարող անուշադրության մատնել հակահամիդյան որևէ շարժում, նամանավանդ, եթե այդ շարժումը սկիզբ էր առնում Եվրոպայում: Հայության մեջ դեռևս թարմ էին 1904 թ. Սասունի արյունալի դեպքերն ու կոտորածները: Երիտթուրքերի շարժումը իրական էր դարձրել Աբդուլ Համիդի տապալումը, և հայ ազատագրական շարժումը աջակցեց նրան, ընդ որում ոչ միայն ՀՅԴ-ն, այլև շատ այլ հայ ու օտար քաղաքական ուժեր:

1908 թ. Աբդուլ Համիդը տապալվեց, և իշխանության եկան երիտթուրքերը՝ «ազատություն», «հավասարություն» և «եղբայրություն» կարգախոսներով: ՀՅԴ-ն նույնիսկ իր պատգամավորներն ունեցավ Օսմանյան խորհրդարանում: 1909 թ. երիտթուրքերն Ադանայում կոտորեցին 30 հզ. հայ: Պարզվեց օսմանյան նոր վարչակազմի իրական դիմագիծը, և ՀՅԴ-ն շուտով դադարեցրեց համագործակցությունը նրա հետ: Այդ փաստը՝ իրադարձությունները չշտապեցնելու նպատակով, տեղի ունեցավ անաղմուկ և աստիճանաբար: Ի՞նչ տվեց հայությանը և ՀՅԴ-ին «համագործակցություն»-ը երիտթուրքերի հետ. հայ ազատագրական շարժմանը և նրան առաջնորդող կուսակցությանը թեկուզ կարճ, բայց ժամանակ տվեց հավաքելու ուժերը և կազմակերպվելու՝ դիմակայելու համար մոտեցող փորձություններին:

1908 թ.-ից սկսած ՀՅԴ-ն ակտիվ ու վճռորոշ մասնակցություն ունեցավ Իրանի հեղափոխությանը, դաշնակցական Եփրեմը դարձավ իրանական հեղափոխական բանակի հրամանատարը, իսկ հեղափոխությունն ի վերջո հաղթանակ տարավ:

Ամփոփելով ՀՅԴ գործունեության երկրորդ տասնամյակը՝ նշենք, որ կուսակցությունն արդեն հանդիսանում էր համատարածաշրջանային, որ իր մասնակցությունն էր բերում տարածաշրջանի բոլոր կարևոր իրադարձություններին: Իր գլխավոր նպատակի՝ Հայաստանի ազատության համար մարտնչելով՝ ՀՅԴ-ն նաև իր լուրջ մասնակցությունն էր բերում օսմանյան լծի դեմ ծառացող ժողովուրդների ազատագրական պայքարին:



ԴՐՕՇԱԿ
Հ Յ Դ 1 2 0

ՀՅԴ կազմակերպած հայ կամավորական գումարտակը 1912 թ.-ից մասնակցեց նաև Բալկանյան պատերազմին՝ անուրանալի իր դերակատարությամբ փայլելով թուրքերի դեմ բալկանյան ժողովուրդների մղած հաղթական կռիվներում:

**ՀՅԴ 20-ամյակին հայ ժողովուրդը ձոնեց իր փառերգը, որ երգում են մինչև այսօր.**

*Դաշնակցության քաջ զինվորներ*
*Բերդան, մոսին են գրկել,*
*Ազատության սիրույն համար*
*Արյուն թափել են ուխտել:*

*Դաշնակցությունը անսասան*
*Հնչեց փող ազատության,*
*Ազատություն, արդարություն*
*Առանց ցեղի խտրության:*

1913 թ. հերթական մեծ կորուստն ունեցավ հայ ազատագրական շարժումը: Կյանքից հեռացավ այդ շարժման հենասյուներից երկրորդը՝ Սիմոն Զավարյանը:

Մոտենում էր մի իրադարձություն, որն իր կնիքն էր դնելու հայոց ողջ հետագա պատմության վրա: Հայոց մեծ եղեռնը: Մեզանում հաճախ սխալ մեկնաբանության է արժանանում այնպիսի մի խնդիր, ինչպիսին 1915 թ. իրադարձություններն էին: Հարցը դիտարկվում է հետևյալ տեսանկյունից: Հայերը կազմակերպված չէին, պատրաստ չէին ինքնապաշտպանության և դրա պատճառով էլ կոտորվեցին, ընդ որում՝ ՀՅԴ-ն լինելով համահայկական ու հզոր կազմակերպություն, չկարողացավ իր պատմական դերը ճիշտ ձևով իրականացնել: Սակայն,



Դաշնակցական պահակախումբը Նախիջևանի Մազրա գյուղում, 1905 թ.
Լուսանկարը՝ Ջ. Գորդոն Բրաունի

ելնելով այն իրողությունից, որ Օսմանյան կայսրությունը դարերով իրականացրել էր հայության թեև մասշտաբով ավելի փոքր, բայց անընդհատ կոտորածներ, իսկ ՀՅԴ-ի հանդես գալու շրջանում էլ Աբդուլ Համիդն ավելի էր սաստկացրել այդ քաղաքականությունը, ընդ որում՝ նախքան ՀՅԴ-ն հայությունը կոտորվում էր առանց ինքնապաշտպանության չնչին փորձի, վերոհիշյալ պնդումը կարելի է ձևակերպել հակառակ տեսանկյունից: Այսինքն՝ հայերը 1915 թ. արդեն բավական կազմակերպված էին, որոշ չափով պատրաստ էին ինքնապաշտպանության, դրա պատճառով էլ երիտթուրքերին չհաջողվեց մինչև վերջ իրականացնել իրենց դժոխային մտադրությունը, և հայ ժողովրդի մի զգալի հատվածը հենց այդ կազմակերպվածության և ինքնապաշտպանության շնորհիվ փրկվեց և շուտով իր արևելահայ հատվածի հետ միասին կերտեց սեփական անկախ պետականությունը: Ընդ որում՝ ՀՅԴ-ն իրոք լինելով համահայկական և հզոր կազմակերպություն, փառքով իրականացրեց իր պատմական առաքելության ամենակարևոր դրույթներից մեկը՝ փրկելու հայությանը բնաջնջումից և առաջնորդելու նրան դեպի հաղթանակներ ու անկախ պետականություն: Այլապես ինչպես բացատրել այն փաստը, որ կարճ ժամանակ անց ցարի հրամանով կազմավորվեցին հայկական յոթ կամավորական գումարտակներ՝ բազմահազար հայ զինվորներով: Ինչպե՞ս կարող էր անկազմակերպ ու թույլ հայությունը ցեղասպանության նման արհավիրքից հետո իսկական բանակ ստեղծել, և ինչպե՞ս կարող էր ՀՅԴ-ն ղեկավարել ու կազմակերպել այդ գումարտակների ստեղծումը՝ առանց իր պատմական առաքելության իրականացման:

ՀՅԴ-ի կազմակերպմամբ ու ղեկավարությամբ ստեղծված կամավորական գումարտակներն աննախադեպ երևույթ էին վերջին վեց դարերի Հայոց պատմության մեջ: Ստեղծվել էր իսկական բանակ՝ փորձված, արհավիրքներով անցած, թրծված

ու երկաթյա մարտիկներից կազմված, որոնց առաջնորդում էին փառքով պսակված և տաղանդավոր զորավարները՝ Անդրանիկն ու Դրոն, Համազասպն ու Քեռին, Արղությանն ու Դաշնակցական Խեչոն: 1915-16 թթ. ռուսական զորքի հետ միասին նրանք ազատագրեցին Արևմտյան Հայաստանը:

Եվ հենց նրանք էին՝ համալրված ուժերով և առավել կազմակերպված, որ 1918 թ.՝ ռուսական զորքերի կողմից թուրքական ճակատը լքելուց հետո, դիմակայեցին թուրքական բանակին ու մայիսյան կռիվներում ջախջախեցին նրան: 1918 թ. մայիսին ՀՅԴ-ին՝ որպես համահայկական կազմակերպության, հաջողվեց թուրքերի դեմ հանել սասունցուն ու վանեցուն, կարնեցուն ու մշեցուն, ալաշկերտցուն ու մոկացուն, երևանցուն ու վանաձորցուն, գյումրեցուն ու գառնեցուն, ողջ հայությանը: Թուրքական իշխանությունը ստիպված էր ընդունելու մի բան՝ Հայոց անկախ պետականությունը, որ 28 տարի առաջ նույնիսկ պատկերացնել անկարելի էր: Այն ժամանակ՝ 19-րդ դարի վերջին, նա տեսնում էր անդեմ ու անկամ հայություն, այժմ նրա դիմաց կանգնած էր զինված ու ոգեշնչված հայը, կազմակերպված ու հզոր հայը:

Այո՛, անցել էր 28 տարի: Ինչե՞ր չէր տեսել հայ ժողովուրդը, ինչի՞ միջով չէր անցել, բայց այդ ամենից դուրս էր եկել կոփված ու հզոր, մարտական ու կազմակերպված: 28 տարի էր, ինչ հայ ազատագրական շարժման գլուխ էր կանգնել ՀՅԴ-ն, կանգնել էր ու առաջնորդել այն՝ սեփական նվիրումով օրինակ ծառայելով ողջ ազգին: Այդպիսի 28 տարի չէր եղել Հայոց պատմության մեջ: Դեռ չէր բոլորել ՀՅԴ-ի ու նաև հայ ազատագրական շարժման երրորդ տասնամյակը:

*Ազատության ջահը վառեց*
*Մեր հայրենիքի գլխին...*

1918թ. մայիսի 28-ն էր: Հայությունը նվաճել էր անկախ ապրելու իրավունքը, անկախ պետականություն ունենալու իրավունքը: Թուրքը ճանաչել էր այդ պետականությունը, որովհետև հայը նրան ստիպել էր ճանաչել այն: Ուստի ճիշտ չեն նրանք, որ ասում են, թե իբր այդ անկախությունը թուրքի նվերն էր: Թուրքերը մեծ հաճույքով կհրաժարվեին այդ «նվեր»-ից, սակայն հայության կազմակերպված դիմադրությունն ու հաղթանակը նրանց այլ ելք չէին թողնում: Դեռ ավելին, Թիֆլիս-Գանձակ գծով դեպի Բաքու, դեպի բաղձալի նավթը շարժվող թուրքական բանակը ամբողջ ճանապարհին հանդիպում էր հայության կատաղի դիմադրությանը, որ կրկին ու կրկին կազմակերպում էր ՀՅԴ-ն: 1918 թ. Բաքվի ինքնապաշտպանությունը, որ ղեկավարում էր ՀՅԴ-ն, երկար ժամանակով կասեցրեց թուրքական բանակի առաջխաղացումը և երբ վերջապես նրան հաջողվեց գրավել քաղաքն ու հասնել նավթին, Առաջին համաշխարհային պատերազմն ավարտվեց: Քառյակ դաշինքի պետությունները այլ ճակատներում պարտություն կրեցին ու զենքը վայր դրեցին: Հետագայում գերմանացի գեներալներից մեկը նշում էր, որ իրենց պարտության պատճառը հայերն էին, որ փակեցին թուրքական բանակի ճանապարհը, որի պատճառով նրանք Բաքվի նավթին չկարողացան տիրել, ու իրենց ամբողջ ռազմական տեխնիկան մնաց առանց վառելիքի: Այո՛, մե՜ծ էր Բաքվի պաշտպանության դերն ու նշանակությունը նաև ու գլխավորապե՛ս արևելահայությանը կոտորածից փրկելու նպատակով: Իզուր չէ, որ այնտեղ էր գտնվում Ռոստոմը՝ Քրիստափոր Միքայելյանի և Սիմոն Զավարյանի մահից հետո հայ ազատագրական շարժման հիմնական կազմակերպիչն ու ոգեշնչողը, տաղանդավոր ղեկավարն ու մշտապես ստվերում գտնվող համեստ դաշնակցականը: Նա ապրելու է մինչև 1919 թ. հունվար, երբ հայ ազատագրական շարժումն արդեն հասել էր իր գերնպատակին՝ Հայոց անկախ պետականության վերականգնմանը:

Այսպիսին է հայ ազատամարտի և ՀՅԴ առաջին 28 տարիների իրական պատմությունը, այսպիսին է եղելությունը: 1890 թ. կանգնելով ՀՅԴ դրոշի ներքո, հայ ժողովրդի լավագույն զավակները իրականություն դարձրեցին ՀՅԴ «Մահ կամ ազատություն» կարգախոսի պահանջը: Հայ ժողովուրդն էլ՝ տեսնելով իր զավակների նվիրումը, անվարան ընտրեց ազատությունը: Հայ ժողովրդի ազատամարտը կազմակերպեց ու ղեկավարեց ՀՅԴ-ն: Իր աշխարհայացքով առաջնորդելով այդ ազատամարտը և ժողովրդին՝ ՀՅԴ-ն 28-ամյա պայքարից հետո նվաճեց գերագույն նպատակը՝ Հայոց անկախ պետականությունը: